

ԳԻՒՂԱԿԱՆ ՀՈԳԵԽՈՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ

ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԽՆԴԻՐԸ.

Ութսունական թուականներից յետոյ, երբ սկսուեց Անդրկովկասի ազնուականների (բէկերի) և վանքերի հողերի սահմանաշարժումը (межевание), շատ տեղերում գիւղական հողերականութիւնը՝ այսինքն թէ քահանաները և թէ մեռած քահանաների ուղղագիծ ժառանգները, օգտուելով այն հանգամանքից, որ իւրաքանչիւր սեպհականատէր իրաւունք ունի իւր հողաբաժինը չափել տալու, յայտնում էին հողաչափին իրանց հողատիրական իրաւունքի մասին և խնդրում օրէնքի հիման վրայ չափել իրանց վրայ իրբե սեպհականութիւն այն հողը, որը ստացել էին գիւղացիներից իրբե քահանայ՝ ձեռնադրութիւնից յետոյ: Հողաչափութեան ժամանակ համարեա առանց բացառութեան գիւղացիք վեճի էին ենթարկուած կամ ինչպէս իրանք են ասում՝ «սպօր» էին ձգում բոլոր չափուող հողերը՝ փիճելի էին համարում այն գլխաւոր պատճառով, որ հողը պատկանում է հասարակութեան և ոչ մշտապէս հողերականին, որ այդ հողը հասարակութիւնը յատկացրել է քահանային համախօսակամեով միայն մինչև մահ և ոչ մշտական ժառանգական սեպհականութիւն տուել, որ համախօսականի զօրութեամբ գիւղացին պարտաւորւում է ապաստել քահանային հարկից, գլխահարկից և նրա բաժին հողահարկից և ոչ նրա որդիներին, որ քահանաների որդիքը՝ իրբե հասարակութեան անդամ կստանան այնքան գլխի հող, որքան ստանում է ամեն մի գիւղացի և պիտի վճարեն իրանց հողաբաժնի հարկերը. եթէ, ասում է գիւղացին, բոլոր քահանաները իրանց ժառանգներով հասարակութեան յանձնած հողերը սեպհականութիւն համարելով հարկ չտան, այն ժամանակ որոշ տարիներից յետոյ համարեա բոլոր հողը կգտունայ հողերականութեան սեպհականութիւն, և հողային հարկը կձանրանայ մեզ վրայ:

Այսպէս մտածելով, գիւղացիք խտռնում են հողերականների հողերը իրանց մասերի հետ

և հողաբաժնի ենթարկում ամեն տեղ հակառակում են հողերականներին, ձեռնում և մինչև իսկ գլուխ պատռում և թոյլ չեն տալիս ոչ հարկից ազատուել և ոչ իրբե սեպհականատէր՝ հողերը չափել և գիտեմ մի փառական օրինակ, գիւղը բաղկացած է 158 տնից կամ ինչպէս գիւղացիք են ասում՝ ժուրնայի տնից, այդ 5 հողերական բաղմամբ տները չափել են տուել իրանց վրայ գիւղացիներից ստացած հողաբաժինները, զրանցից երեքը քահանաներ են և կենդանի մէկը վաղուց մեռած քահանայի որդիք, միւսն էլ վաղուց մեռած աստիճանաւոր (հողերականին) որդիք. լաւ է, որ զրանց փոխարեն այժմ նոր ձեռնադրուել են երեք քահանայ և երեքն էլ այդ ժառանգական տներից, այլապէս կունենայինք 8 տուն, որոնք սեպհական հողատէր կուզենային լինել: Յամենայն դէպս՝ այդ 5 տունը իրանց գլուխների հողաբաժիններով կազմում են մի համայնք, որը, եթէ քահանայական ընտրողական սկզբունքը միշտ կանոնաւոր գործադրուի, կարող է այնքան ընդարձակուել, որ հարկւր տարուայ ընթացքում գիւղի համարեա բոլոր հողերը իրան կսեպհականացնի, այդ բանը գիւղացիներին ստիպում է քահանայ ընտրել միշտ հին քահանայական տանից և ոչ հարկատուներից: Պատահել է ինձ նոյն գիւղում ներկայ լինել գիւղացիների և քահանաների սարսափելի վեճին, ձեռ ու կռուին և ամօթալի գործողութիւններին:

Արդեօք գիւղական հողերականութիւնը իրա սեպհականատէր լինելու իրաւունքը ի՞նչ բանի վերայ է հիմնում, հայոց հին եկեղեցական իրաւունքին, աւանդական կարգին, թէ պետական օրէնքին:

Հայոց հին եկեղեցական իրաւունքը այնքան քիչ նիւթ է տալիս գիւղական հողերականութեան անտեսական ապահովութեան խնդրի մասին, որ դժուար է յիշուել այդ կէտի վրայ: Յայտնի է, որ Տրդատի և Առստուորցի օրով բոլոր մեծ և փոքր գիւղի եկեղեցիներին զանազան չափով հողեր յատկացրին, աւաններին 7 տան հող, իսկ աղարակներին 4 տան հող: Սոյնպէս և թագաւորն յամենայն իշխանութեան իւրում առ հասարակ՝ գրեաց

չորս չորս հոգս յամենայն յազարակ տեղիս իսկ յաւանս եօթն եօթն երդոյ հոգ ի ծառայութիւն սպասաւորութեան եկեղեցւոյ նուէր պտղոց Տեառն մատուցանէր Ազաթ. 483 եր.: Պապի ժամանակ այդ հոգերը խլուեցին 7-ից միայն երկու տան հոգ մնաց եկեղեցիներին. «Հատ ևս յարքունիս Պապ թողաւոր զհոգ եկեղեցւոյն ...» Զի յեօթն հոգոյն զհինգն հատանէր յարքունիս և զերկուսն միայն թողոյր ...» Եւ ըստ հոգոյն թողոյր երկուս երկուս առ զեօղ մի երեց, և մի սարկաւազ ...» Փետտոս 194 եր.: — Ս. Սահակի կանոնների մէջ, որտեղ մեծ տեղ է տուած հոգեւորականութեան տնտեսական ազահովութեան խնդրին հոգի մասին ոչ մի խօսք չկայ. ուրիշ տեղս յետագայ դարերի կանոններում ոչ մի յիշատակութիւն չկայ հոգային հարցի մասին (բացի 648 թ. Դուինի ժողովից). միայն փաստը այս է, որ այժմ մեր եկեղեցիները զիւզերում քիչ բացառութեամբ չունին հոգաբաժիններ: Դիւզական հոգեւորականութիւնը ապրում էր ժողովրդի աղատական նուէրներով, տօներէն արդիւնքներով, կալի հնձի և բերքերի օրհնելով ու տասանորդ տասնադով և իրբե զիւզացիս դաշտային պարտաւնեքներով: Արդեօք նախկին ժամանակներում հոգեւորականները իրանց հոգերի համար տէրութեան կամ կայուն աւանդութիւն հոգային հարկ տային էին զրամով կամ տասանորդով կամ եթէ իրանք չէին հատուցանում, նրանց որդիքը տային էին կամ եթէ որդիքը զլիսահարկից ազատ էին տասանորդի հարկից էլ ազատ էին արդեօք: Այս մասին ոչ մի զրական յիշատակութիւն չունինք միայն զիտեղք ընդհանուր առմամբ, որ հոգեւորականները հարկից ազատ էին, որոնց հարկի տակ ձգելը մեծ աղմուկ հանեց Վարդանանց ժամանակ: Չունենալով զրական տեղեկութիւններ, թողնելով ենթադրութիւններ, որոնք կարող են վիճելի համարուել, կարելի է ասել, որ զիւզական հոգեւորականութեան սեպհականաւոր համարուելու խնդիրը մեր եկեղեցական իրաւունքը թողնում է անորոշ վիճակում և եթէ ի նկատի ունենանք քաղաքի քահանաների ազահովութեան կարգը, տիեզերական և տեղական ժողովների մի քանի

կանոնները քահանայի մահից յետոյ նրա որդիների խնամելու վերաբերմամբ, պիտի մօտենանք այն ենթադրութեան, որ հոգեւորականների որդիքը եթէ ազատ էին զրամական և բերքի հարկից, այդ միմիայն քահանայի կենդանութեան ժամանակ էր իսկ մահից յետոյ հոգը մնում էր հասարակութեան, գոնէ եկեղեցական կանոններով խիստ պատժի էին ենթարկւում այն եպիսկոպոսները և քահանաները, որոնք եկեղեցու եկամուտները իրանց ցեղից չհանելու նպատակով ձեռնադրել էին տայիս իրանց մօտիկ ժառանգներին կամ ազգականներին (զարմանալի բացառութիւն են կաղմում Դուինի 648 թ. ժողովի կանոնները, որոնց մօտիկ յարմար ժամանակ կ'լսենք):

Այս հիմամբ, զիւզական հոգեւորականութիւնը չի կարող իւր վարմունքի հիմք ընդունել հայոց եկեղեցական իրաւունքը:

Նա իւր սեպհականաւոր վիճակը իրաւունքը հաստատում է աւանդական այն կարգի վրայ, որը զբեւ են իւր հայրը պապը, սրանք յաջորդաբար քահանայ լինելով նոյն ծխի վրայ, միշտ ազատ են եղել հարկաւորութիւնից և տասնակ տարիներ ընթացքում զրանց ընտանիքում հաստատուել է այն կարծիքը, որ քահանայական օջաղը ազատ է ամեն տեսակ հարկից, որ նրա հոգը հասարակութեան հոգաբաժին չէ, այլ իրանց օջաղի սեպհականութիւնն որովհետեւ կրկնում եմ 4—5 սերունդ ժառանգաբար քահանայութիւնը այդ օջաղում է մնացել: Ժառանգական կարգը մտցրել է նրանց մէջ հոգի սեպհականութեան զաղախարը: Թէ ժառանգական քահանայութիւնը գոյութիւն ունի այժմ, ոչ իրբե կանոն ի հարկ է, այլ հանգամանքներից առաջացած սովորութիւն, և թէ գոյութիւն ունի և վաղ ժամանակներում, այդ երեւում է մինչև իսկ Զ. տիեզերական ժողովի 33 կանոնից: Ժողովը ի նկատի ունենալով, որ հայոց աշխարհում հրէաների օրինակին հետեւելով կարգում են քահանայ հոգեւորականների որդիներին, շատ անգամ առանց ընտրութեան և փորձի ենթարկելու խտրութեւ արգելում է: Թէև Զ. տիեզերական ժողովը մեզ համար պարտաւորական չէ, բայց այդ կարգադրութիւնը հակառակ չլինելով

մեր եկեղեցու ոգուն և կարգերին համապատասխան է նախկին մեր ազգային կանոնների կարգադրութեան. ուստի այդ կարգը մտել է, ոչ հեռեկեղծ հրէաներին, նոյն իսկ հակառակ մեր եկեղեցու կանոններին մի քանի սովորութիւնների շնորհիւ: Վիզերում սարկաւազ և առիճանաւոր չէին պահում զիւղացիք եկամուտների քշութեան պատճառով քահանաները ստիպուած էին իրանց որդուն և մօտ ազգականներին սովորեցնել եկեղեցական կարգը և 8—9 տարեկանից սկսած շրջեցնել իրանց հետ իրրե բուրվատակիր և փոխաւաց պատարագի ժամանակ իրրե սպասաւոր. այնպէս որ զիւղի մէջ ժամանակին ամենայրմար քահանայացուն համարում էր այդ վարժուած և պատրաստ անձը: որը և դառնում էր հօրը փոխանորդը: սրա որդին էլ նոյն կարգով դասնում էր փոխանորդի յաջորդը: Այդ կարգը ստիպել էր ապիս ժողովրդին նայել այդ օջաղի վրայ պատկառանքով և այդ տնից ընտրուած քահանաներին յարգանքով:

Ներսէս Ե-ի Տփիսի առաջնորդութեան օրով և երբ նա մերժում էր ազէտ քահանաներին ձեռնադրել, իշխանները բողոքում էին կաթողիկոսին որ Ներսէսը աւանդական կարգը քանդում է և չի ձեռնադրում այն անձին, որի օջաղում է քահանայութիւնը 150 տարուց ի վեր: Այդ աչքով էլ նայում էր ժողովուրդը Լուսաւորչի տոհմի վրայ ի պատիւ և ի յարգանս հիմնադրի և որովհետեւ այդ սովորութիւն էր և ոչ կանոն. ուստի և մէջ ընդ մէջ ընտրում էին կաթողիկոս Մանազկերացի եպիսկոպոսներ և այլ անձինք: Այժմ ընտրողական սկզբունքի լայն ըմբռնումը և լուս քահանայ ունենալու տենչը արմատախիլ են անում ժառանգական քահանայութեան կարգը և միւս կողմից հոգային վեճ առաջացնում զիւղացիների և հոգեորականութեան մէջ: հոգեորականութիւնը իւր իրաւունքը պաշտպանելու համար յենում է աւանդական կարգի վրայ և վերջինիս միջոցով պետական օրէնքի այն կէտի վրայ, որ հոգի սեպհականատէր լինելու համար հարկաւոր է 10 տարուայ անվեճ տիրապետութիւն. այն ինչ զիւղական հոգեորականութիւնը ազատուցանում է որ, ոչ

թէ 10, հասար շատ ու շատ տասնակ տարիներ ժառանգարար տիրապետել է անվեճ կերպով այդ հոգը:

Բացի այդ, պետական միւս օրէնքները շատ նպաստաւոր են հոգեորականներին ուստի և զատարանին և տեղական վարչութեան գիմնէյս վճռում է ժամանակաւորապէս յօդուտ հոգեորականութեան մինչև սահմանաչափումի վերջնապէս կամ զանազան պատճառով ձգձգւում է և տեղիք տալիս ահագին խռովութիւնների:

IX հատորի 485 յօդուածը ասում է, որ հայոց աշխարհիկ հոգեորականութիւնը ազատ է ամեն տեսակ անձնական հարկերից և պարտաւորութիւններից, իսկ քահանայագործները և զինուորադրութիւնից: 502 յօդուածի 3 կէտի զօրութեամբ հայոց հոգեորականների որդիքը համարում են տոհմական պատուտ որ քաղաքացի (потомственный почетный гражданин): 506-ի 24 կէտի զօրութեամբ, հայոց եկեղեցու տիրացուների ժամհարների և ստրկասացների (псаломщикъ) զպիւր որդիքը համարում են անձնական պատուաւոր քաղաքացի (личный почетный гражданин): 536 յօդուածը պարզարանում է, որ տոհմական պատուաւոր քաղաքացիների իրաւունքը իջնում է ուղիղ զծով ժառանգների վրայ, որոնց իրաւունքներից մէկն է ազատ լինել զբռնահարկից (563 յ.): իսկ աւելի որոշակի և պարզ խօսում է V հատորի (о прямыхъ налогахъ) 482 յօդուածի յաւելման 18- յօդ-ի ծանօթութիւնը, որի մէջ կարդում ենք «հարկատու գաւին պատկանող անձինք, որոնց հասարակութիւնը հարկից ազատում է ուղղափառ կամ հայոց աշխարհիկ (бѣлос) հոգեորականութեան մէջ մտցնելու համար, սահմանուած կարգով հոգեորատան ընդունելուց կամ հոգեոր կոչումն ստանալուց յետոյ ազատում են հարկերից, թէ իրանք և թէ իրանց որդիքը»:

Այս յօդուածներով հայոց հոգեորականութիւնը զուգընթաց Ռուսաց հետ ստանում է արտանութիւններ, որոնցով թէ իրանք, թէ որդիք ուղղապէս շատ աւելով ազատում են հարկերից և պարտաւորու-

թիւները և ոչ որ ժողովրդից իրաւունք չունի նրանցից հարկ պահանջել:

Հիմայ հարց է ծագումն արդեօք հոգեորականների այդ հարկերը ծանրանում են ժողովրդի վրայ: Թէ հարկահան վարչութիւնը ոչնչացնում է այդ հարկային գրքի մէջ (исключает из оклада): Դրան պատասխանում է V հատորի 485-ի յաւելման 18-դ յօդուածը, որ հարկատու դասին պատկանող անձինք հոգեորական զառնալուց յետոյ ազատւում են հարկերից: Իսկ ժողովուրդը այդ հարկերը վճարելուց ազատւում է առաջիկայ բնիկիւսին: Այստեղից երևում է որ ժողովուրդը զուր է մտածում, որ հոգեորականութեան հարկերը ծանրանում են իւր վրայ: 1901-ի յունուարից մտնում է արդէն հարկերի նոր կարգ, որով վերանում են զանազան ձևի տուրքերը և մտնում է հողայինը (поземельный налог). հողային հարկին ենթարկւում են բոլոր ազատ վանքերին, ազնուականներին, և հոգեորականներին պատկանող հողերը, որոնցից վերջրածը ծախսւում է տեղական պիտոյքների վրայ (земские потребности). Թէ ի՞նչպէս պիտի առնուի այդ հարկը հոգեորականութիւնից, կամ որ մասը ժողովրդից, որ մասը նրանցից, այդ անորոշ է և կարողութիւն մտիկ ապագայում: Յամենայն դէպս ինչպէս էլ որ ընթանայ այդ խնդիրը, ժողովրդի և հոգեորականութեան այդ վէճը մնալու է սուկախ, եթէ բարձր հոգեոր իշխանութիւնը չմիջամտի այդ խնդրում: Առս զիւզական հոգեորականութիւնը պետական օրէնքներով բոլորովին անկախ պայմանների մէջ է ժողովրդի վերաբերմամբ, նրանց իւրաքանչիւր եկեղեցին պիտի ունենայ 33 ղեկեաթին անվէճ հող քահանաների և տաթիճանաւորների պահպանութեան համար (X-ի II մասն, 349 յօդ.). մինչև իսկ օրէնքը պահանջելիս է եղել, որ եթէ ամեն մի ծուխ ունի 12—15 ղեկեաթին հող, եկեղեցին պիտի ունենայ 66 ղեկ. ամենաքիչը 49½, ամենաշատը 99 ղեկ. եթէ ծուխը ունի 15 ղեկ. և գործարաններ ու հանքեր, իսկ 351—359 յօդուածները ստիպողական պահանջ են դնում կալուածատէրերի վրայ, որ եկեղեցուն յատկացնեն օրէնքով նշանակած հողը: 346 յօդ. ամեն մի առաջնոր-

դարան պիտի ունենայ 60, և վանքը 150—100 ղեկեաթին հող: Այս կարգը գոյութիւն ունէր և մեր մէջ Տրդատի ժամանակ: Այժմ այդ մասին խօսելն աւելորդ է, որովհետև հողը ժողովրդի բազմանալովն այնքան քաջել է, որ այդ մասին խօսք անգամ լսել չի կամենալ հասարակութիւնը և մանաւանդ հողաշափութիւնից յետոյ, երբ բոլոր հողերը չափ ու սահմանի տակ կգրուին, դժուար կլինի մի փոքրիկ մասն անգամ եկեղեցու անվէճ սեպհականութիւն դարձնել: Մեզ մնում է հաշտուել եղած զրույթեան հետ, հողարածնութեան հարցը, որքան կախուած է հոգեոր իշխանութիւնից, կարգի բերել և ապահովել ուրիշ միջոցներով հոգեորականութեան անտեսական կեանքը:—

Գիւղացիք համաձայնում են միայն մի կէտում, այն է քահանային տալ մի զլինի հող, որի հարկը պարտաւորւում են վճարել, քահանայի որդիներին իրրե զիւզի անդամների յատկացնել հողարածիներ և հարկերը պահանջել, և միւս կողմից ուրախութեամբ ընդունում են տուրքի քանակ (արհաւ) նշանակել բոլոր օրինակատարութիւնների համար քահանայի կեանքը ապահովելուն համար:—Քահանաները համաձայն են այդ բանին միայն այս տարկութեամբ, որ իրանց ծուխը առնուալը 150 անից պակաս չլինի և ծխականները պարտաւորուին արհաւի մէջ նշանակած ճշտութեամբ հատուցանել: Այս հաշտութիւնը կատարեալ անկու համար հարկաւոր է հոգեոր բարձր իշխանութեան միջամտութիւնը, որը կարող է կանխաւորել հետեւեալ ձևով. ա. ծխարածնութիւնը անի ընդհանուր և որոշ կարգերով առնուալը մի քահանային տալով 150-ից ոչ պակաս ծուխ. բ. համախօսականը կազմի գործակալը կամ յաջորդը զիւզական ժողովի մէջ բոլորի համաձայնութեամբ և ճիշտ ստորագրութեամբ. գ. համախօսականի մէջ մի առ մի զրուեն այն տուրքերը, որոնք պարտաւորւում են զիւզացիք տալ քահանային օրինակատարութիւնների համար: Գիւղացիք և քահանաները համաձայնութեան էին դալիս այսպէս որոշելով տուրքերը. միւրտութեան համար 20 կոպէկ, անօրհնէքի համար 20 կ. գերեզմանօրհնէքի

20 կ. թաղման համար 1. ր. պսակի համար 2—4 բուբլի. և տուներ երկու փութ ցորեն կամ ուրիշ բերք: Հաշուելով 150 տան վրայ, կտանանք այսպիսի դումար. 2 անօրհնէք և 2 գերեզմանօրհնէք $80 \times 150 = 120,00$, 20 մկրտութիւնից $20 \times 20 = 4,00$, 20 թաղումն — 20 ր. 20 պսակի համար — 40 — 80 ր. 300 փութ ցորենն էլ 80 կոպէկով 240,00, ընդամենն 424—464, մօտ 500 բուբլի. սրա վրայ աւելացնենք և մի գլխի ձրի հողը և որդիներին պարագիծներին աշխատանքը, եթէ ի հարկ է հասած են, կտանանք մի վայելուչ անասութիւն, որով կարող է կառավարուել գիւղական քահանան: Եթէ հնարաւորութիւն լինի այդ բոլորը դրամի վերածել և հարկի մէջ մտցնելով ամեն տարի ժողովուրի և ամէն ամիս իրեն ուժիկ ստացուի, այդ շատ բաւկլինի, բայց գիւղերում դժուարութեամբ կը մտցուի այդ կարգը:

Ոչ մի դժուարութիւն չկայ այդպիսի մի կարգ մտցնելու գիւղական հասարակութեան մէջ, միայն հարկաւոր է մի քիչ եռանդոտ յաջորդներ և գործակալներ ունենալ և հետեւողարար հրամայող հոգեւոր կարգադրիչ իշխանութիւն, այն ժամանակ կիւրանան անասողի վէճերը և անհիմն կոխները, որ ամեն օր տեղի են ունենում մեր գիւղերում, հոգեւորականների և ժողովրդի մէջ և ահագին անջրպետ բանում երկու մարմինների մէջ. թէ ի նշտէս վայր է ընկնում հոգեւորականութեան պատիւը և վարկը այդպիսի ընդհարումների պատճառով, այդ կարող է տեսնել ամեն ոք ամեն տեղ:

Ն. սարկ. Մելիք Թանգ.



ԳՐԻԳՈՐ ԶԱՆԵԱՆ



Յուլիսի 17-ին հեռագիրը գուժեց Գրիգոր Զանչեանի մահը: Նոյն ամսի 21-ին կատարուած մեծ յուզարկաւորութիւնը, Ռուսաց և Հայոց մամուլի ցոյց տուած բուռն համակրութիւնը մի առհասարակ էր, թէ յանձին Գրիգոր Զանչեանի Ռուս հասարակութիւնը կորցնում է իւր նշանաւոր հրապարակախօսներից մէկին, իսկ հայ ժողովուրդը արդարութեան և որբերի պաշտպանին: Մենք մի քանի խօսքով միայն աշխատենք ընթերցողներին ծանօթացնել նորա արդիւնայից գործունէութեան հետ:

Գրիգոր Աւետիսեան Զանչեան ծնուած է 1851 թ., միջնակարգ ուսումն ստացել է Լազարեան ճեմարանում և 1874 թ. աւարտել իրաւաբանական ֆակուլտետը: Այնուհետեւ նա իւր կեանքը նուիրել է իրաւաբանական գրական գործունէութեան: РУССКІЙ ВѢДОМОСТИ լրագրի գլխաւոր աշխատակիցներից և հրատարակիչներից մէկն է եղել: Նորա գրական գործունէութիւնը կարելի է երկու մասի բաժանել, որպէս անդամ ռուս պետութեան և որպէս անդամ հայ ժողովրդի: Որպէս անդամ պետութեան իւր անձը նուիրել է փաթմունական թուականների դատաստանական և օրէնսդրական վերանորոգութիւնների պաշտպանութեան և լուսաբանութեան: Նորա պաւ կարգի աշխատութիւնների գլուխ գործողն է ИЗЪ ЭПОХИ Великихъ реформъ մեծահասարակագիրը, որ ռուս հասարակութեան մէջ ջերմ համակրութիւն է զարթեցրել: Հէնց առաջին տարին միմեանց յետեւից երեք հրատարակութիւն ունեցաւ: Մեր ձեռքը եղած հինգերորդ հրատարակութեան սկզբում զրաւ ծանօթութիւնից իմանում ենք, որ զբից ստացուած եկամուտի մի մասը բարեգործական նպատակի պիտի նուիրուէր: Այստեղ արդէն երեւում է Զանչեանի բարութիւնն ու թշուառնե-